ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- 2025 թվականի ընթացքում վարչության կողմից համապատասխան աշխատանքներ են իրականացվել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի, պետական կառավարման մարմինների ու վերջիններիս տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության և փոխհամաձայնեցված գործողությունների ապահովման ուղղությամբ:
- 2025 թվականի ընթացքում հրավիրվել և անցկացվել է մարզի խորհրդի թվով 4 նիստ: Վարչության կողմից պատշաճ կարգով իրականացվել են մարզի խորհրդի նիստերի հրավիրման հետ կապված կազմակերպչական հարցերն ու նիստերի արձանագրումը:
- ՀՀ Շիրակի մարզպետի գլխավորությամբ և տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության համակարգմամբ պարբերական այցելություններ են կազմակերպվել մարզի բոլոր 6 համայնքներ (դրանք ընդգրկող բոլոր բնակավայրեր), ինչպես նաև անցկացվել խորհրդակցություններ՝ տեղերում արձանագրված խնդիրների վերհանման և լուծման ճանապարհներ նախանշելու նպատակով:
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարությամբ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2025 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն մարզի թվով երեք՝ Արթիկ, Ամասիա և Գյումրի համայնքներում իրականացվել է տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողություն:
- Վարչության կողմից իրականացվել է ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ առաքված մարզի համայնքների ավագանիների շուրջ 1100 և համայնքների ղեկավարների շուրջ 8 հազար որոշումների իրավաչափության որոշման աշխատանքների համակարգում: Այս համատեքստում հարկ ենք համարում արձանագրել, որ կատարված աշխատանքների արդյունքում բավականին բարձրացել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների որակը և նախորդ ժամանակահատվածների հետ

համեմատությամբ մի քանի անգամ նվազել է ոչ իրավաչափ կամ ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումների քանակը:

- Գործուն միջոցներ են ձեռնարկվել 2025 թվականի մայիսի 28-ին և հունիսի 14-ին ուժեղ քամու հետևանքով ՀՀ Շիրակի մարզի Գյումրի, Արթիկ, Ախուրյան և Անի համայնքներին պատճառված վնասների վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության հավաքագրման (մարզային և համայնքային հանձնաժողովների կողմից ակտերի) կազմման և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու ուղղությամբ: Արդյունքում ՀՀ կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 18-ի N 1334-Ն որոշմամբ ՀՀ Շիրակի մարզին պատճառված վնասների փոխհատուցման նպատակով տրամադրվել է 78 մլն 596 հազար 300 ՀՀ դրամ: Գումարի տրամադրումից հետո վարչության կողմից ամենօրյա աշխատանք է տարվել համայնքների ղեկավարների և համատիրությունների նախագահների հետ պայմանագրերի կնքման, գումարների տրամադրման, հասցված վնասի վերականգնման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և գումարի նպատակային ու արդյունավետ ծախսման վերահսկողության նպատակով:
- Միջոցներ են ձեռնարկվել մարզի համայնքներում՝ ավագանու նիստերի առցանց հեռարձակումներն անխափան իրականացնելու, ինչպես նաև համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերի մշտական հասանելիությունն ապահովելու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված բովանդակությամբ համալրելու ուղղությամբ, ինչի նպատակով վարչության աշխատողների կողմից պարբերաբար իրականացվել են մշտադիտարկումներ և արդյունքները երկամսյա կտրվածքով ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
- Վարչության անմիջական համակարգմամբ իրականացվել է մարզի համայնքների աշխատակազմերի թվով 75 համայնքային ծառայողի, ինչպես նաև մարզի տեղական ինքնակառավարման մարմինների շուրջ 20 ներկայացուցիչների (համայնքի ղեկավար, համայնքի ղեկավարի տեղակալ և ավագանու անդամ) վերապատրաստման գործընթացը:
- Կազմակերպվել և անցկացվել են Արթիկ և Ամասիա համայնքների աշխատակազմերի՝ ատեստավորման ենթական համայնքային ծառայողների ատեստավորումները: Ձեռնարկվել են անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ՝ մարզի մյուս համայնքներում 2026 թվականի տարեսկզբին համայնքային ծառայողների ատեստավորումը կազմակերպելու նպատակով:

- Տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ աշխատանքի արդյունքում կազմակերպվել և անցկացվել են մարզի համայնքների աշխատակազմերի համայնքային ծառայության թվով 56 թափուր պաշտոնների համալրման համար հայտարարված մրցույթներ:
- ՀՀ ՏԿԵ նախարարություն ուղարկվել է 50-ից ավելի հարցում՝ համայնքների աշխատակազմերում առկա ժամանակավոր թափուր պաշտոնները ժամկետային աշխատանքային պայմանագրերով համալրելու նպատակով տվյալ պաշտոնների անձնագրերի պահանջներին բավարարող՝ կադրերի ռեզերվում գրանցված անձանց մասին տեղեկություն ստանալու վերաբերյալ:
- Վարչության կողմից հսկողություն է իրականացվել ՀՀ Շիրակի մարզի Արթիկ, Ախուրյան և Անի համայնքներում ՀՀ ՏԿԵ նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից իրականացված կադրային գործի վերահսկողության արդյունքում արձանագրված թերությունների վերացման աշխատանքների կատարման նկատմամբ:
- Դիտարկվել է համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների (շուրջ 10) և նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների (100 և ավելի) թափուր պաշտոնների համալրման նպատակով հայտարարված մրցույթների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:
- Վարչության անմիջական վերահսկողությամբ ամբողջությամբ ավարտվել է մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերանորոգվող թվով 500 մանկապարտեզների ծրագրում ընդգրկված ՀՀ Շիրակի մարզի թվով 20 մանկապարտեզների՝ գույքի մատակարարման հետ կապված գործընթացը: Այդ նպատակով ձևավորված պատասխանատու ստորաբաժանումը պարբերական այցելությունների միջոցով մշտադիտարկում է իրականացրել մատակարարման ժամկետների, ապրանքի որակի և համապատասխանության մասով:
- Պատշաճ կարգով և սահմանված ժամկետներում ՀՀ ՏԿԵ նախարարություն են ներկայացվել համայնքային և մարզային մակարդակներում միջտարածաշրջանային ապակենտրոն համագործակցությանը վերաբերող տարբեր տեղեկությունները, հայերեն և ռուսերեն լեզուներով կազմվել և նախարարություն է ներկայացվել ՀՀ Շիրակի և Ղազաստանի Ակտյուբինսկի մարզերի միջև համագործակցության հուշագրերի նախագծերն ու ստորագրման հիմնավորումը:

- Մշտական վերահսկողություն է իրականացվել պետական ենթակայության 2 և համայնքային ենթակայության 1 կազմակերպությունում թվով 7 այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնողների և ծառայության կազմակերպման նկատմամբ:
- Արտակարգ իրավիճակներում ՀՀ Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայն՝ մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչների ակտիվ ներգրավմամբ ՀՀ Շիրակի մարզպետի որոշումներով մարզում անցկացվել են շտաբային և ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություններ:
- Պարբերական այցելություններ են եղել համայնքներ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2025 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների» ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման հսկողությունն իրականացնելու նպատակով: Կատարված աշխատանքների վերաբերյալ հավաքագրվել է անհրաժեշտ տեղեկատվություն և ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ու ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչություն:
- Շարունակվել են տեղեկատվության հավաքագրման և համապատասխան մարմիններ ներկայացնելուն ուղղված աշխատանքները՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց տրամադրված հումանիտար օգնության, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզ տեղափոխված և պետական ու համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում բնակվող Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների տեղաշարժի վերաբերյալ: Հստակ վիճակագրություն է վարվել նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների հաշվառման ուղղությամբ՝ տվյալները վերջիններիս միտված ծրագրերի իրականացման ընթացքում կիրառելու նպատակով: Միաժամանակ, համայնքապետարաններից ստացված տվյալները ներառվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ստեղծված առցանց հարթակում:
- Ձեռնարկվել են միջոցներ զոհված զինծառայողների հարազատների և վիրավոր զինծառայողների կողմից բարձրացված հարցերի լուծման ուղղությամբ, ինչպես նաև վերջիններիս մշտապես ցուցաբերվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

- 2025 թվականի ընթացքում կազմակերպվել են քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ծառայությունների պետերի և շտաբների պետերի հրամանատարական պատրաստության պարապմունքներ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության մասնագետների մասնակցությամբ:
- ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության և ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակի հետ համագործակցված աշխատանքի արդյունքում պատշաճ կարգով իրականացվել է մարզում անցկացված մի շարք հանրային միջոցառումների ժամանակ հասարակական կարգի պահպանությունը և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը:
- ՀՀ Շիրակի մարզում բնակչության պաշտպանության, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների վերացման, պատասխանատու կազմակերպությունների միջև փոխհամագործակցված աշխատանքների ապահովման նպատակով մշակվել են ՀՀ Շիրակի մարզպետի մի շարք որոշումների նախագծեր և ներկայացվել հաստատման:
- Իրավասությունների սահմաններում աշխատանքներ են տարվել ՀՀ պետական սահմանի պահպանության գործում ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի, իրավասու պետական կառույցների, սահմանամերձ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և ազգաբնակչության ու սահմանապահ զորամասերի միջև փոխհամաձայնեցված և արդյունավետ համագործակցության ամրապնդման ուղղությամբ:
- Կազմվել և ՀՀ ներքին գործերի նախարարություն է ներկայացվել «Ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ում 2026 թվականի ուսումնական տարում ՀՀ Շիրակի մարզի ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման պլանը և հետևողական աշխատանք է տարվում պլանում ընդգրկված անձանց մասնակցությունը դասընթացներին ապահովելու ուղղությամբ:
- ՀՀ Շիրակի մարզպետի լիազորությունների շրջանակում իրականացվել են անհրաժեշտ գործողություններ 2025 թվականի մարտի 30-ին ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրությունների կազմակերպչական աշխատանքներին աջակցելու նպատակով:
- Վարչության կողմից աշխատանքներ են տարվել ՀՀ Շիրակի մարզի՝ մասնակցային բյուջետավորման գործընթացում ընդգրկված համայնքների հետ 2025 թվականի

ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթացի պատշաճ կազմակերպումն ապահովելու, ինչպես նաև 2026 թվականի նույն գործընթացի նախապատրաստական աշխատանքները սահմանված կարգի համաձայն իրականացնելու նպատակով:

- Վարչության աշխատակիցներն ընդգրկվել են ամենատարբեր գործառույթներ իրականացնելու նպատակով մարզպետի, ինչպես նաև համայնքների աշխատակազմերում ստեղծված աշխատանքային խմբերում և հանձնաժողովներում (գյուղատնտեսական կենդանիների հաշվառման, գենդերային հարցերի, համայնքների աշխատակազմերի համայնքային ծառայողների մրցութային և ատեստավորման, ինչպես նաև ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկավող մրցույթների և այլն):
- Իրականացվել են տարաբնույթ հանձնարարականների ու գրությունների քննարկման, ամփոփման և արդյունքների վերաբերյալ պատասխան գրությունների նախապատրաստման աշխատանքներ:
- Ապահովվել է գաղտնի գործավարությամբ սահմանված ընթացակարգով մի շարք հանձնարարականների կատարումը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՏԿ ԵՎ ՏԻՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐԱՄ ԱՆՏՈՆՅԱՆ